ՍԱՐԳԻՍ ԿԱՍՅԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կապիտալիզմը հասարակական վերջին հակամարտ արտադրության եղանակն է։ Համաշխարհային պատմական զարգացման ամբողջ ընթացքը ցույց է տալիս, որ կապիտալիզմի անխուսափելի կործանման վերաբերյալ Կարլ Մարքսի ուսմունքը խորապես գիտական է ու ճշմարիտ։ Մարքսի տնտեսական ուսմունքը, նշում է Ս. Կասյանը, պրոլետարական գիտության զինանոցն է ինչպես շահագործողական կարգերի վերացման, այնպես էլ սոցիալիզմի կառուցման համար։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների պայմաններում մարքսյան տեսության ուսումնասիրումը պատճառաբանվում է նրանով, որ այն ունի ոչ միայն պատմական նշանակություն կամ գնահատումն է հանճարեղ տնտեսագետի դիտական խոշորագույն ծառայության, այլև չափազանց կարևոր է նաև գործնական տեսակետից։ Չնայած կապիտալիստական և սոցիալիստական տնտեսակարգերի արմատական տարբերություններին, «Մարքսի քաղաքատնտեսությունը շարունակում է ընձեռել ապահով միջոց մեր տնտեսական իրականության հիմքերը ճշգրիտ տեսնելու... համար»[1],— գրում է Ս. Կասյանը։

Հենվելով Կ. Մարքսի ուսմունքի վրա, Ս. Կասյանը հանգամանորեն քննարկում է կապիտալիստական արտադրաեղանակի ծագման, զարգացման և անկման հարցերը։ Կապիտալիստական արտադրաեղանակի առանձնահատկությունը նա համարում է այն, որ արտադրության միջոցները և աշխատուժը գտնվում են սոցիալապես հակադիր դասակարգերի ձեռքում։ Ընդ որում «առաջին ֆակտորի տեր ու տիրականը կապիտալիստ դասակարգն է՝ բուրժուազիան,— գրում է Կասյանը,— իսկ սուբյեկտիվ ֆակտորի կրողը՝ ժամանակակից պրոլետարիատը— ազատ, բայց ընդմիշտ վարձվող բանվորների դասակարգը։ Արտադրության պրոցեսը ի կատար ածելու համար այդ երկու ֆակտորները անհրաժեշտորեն միանում են՝ պայման, որ անխուսափելիորեն առաջ է բերում առաջին ֆակտորի ներկայացուցչի շահագործումը, այսինքն բանվորական ուժի ներկայացուցիչների աշխատանքի մեծագույն մասի յուրացումն»[2]։ Արտադրության միջոցներից զուրկ բանվորները սովի սպառնալիքի տակ իրենց աշխատուժը վաճառում են արտադրամիջոցների սեփականատիրոջը՝ կապիտալիստին։

Նախորդ արտադրաեղանակների ժամանակ հասարակությունը հիմնակա-

---

1 Ս. Կասյան, Ընտիր երկեր, Երևան, 1967, էջ 419։

2 «Կայծ», 4. V. 1906։

նում բաղկացած էր միատարր միավորների զանգվածներից և յուրաքանչյուր այդպիսի միավոր կատարում էր տնտեսական աշխատանքների համարյա բոլոր տեսակները՝ սկսած հումքի հայթայթումից, վերջացրած պատրաստի արդյունքի սպառումով։ Արտադրողական ուժերի հետագա զարգացման, արտադրության միջոցների մասնավոր սեփականության, ապրանքա-դրամային հարաբերությունների աճի և աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետևանքով բնատնտեսությունը տեղի տվեց։ Անցան այն ժամանակները, գրում է Ս. Կասյանը, երբ «ժողովուրդներն ու ազգերը ապրում էին իրենց սեփական կյանքով, ինքնամփոփ, սեփական կեղևի մեջ՝ առանց հարաբերության և կախման մեջ լինելու հարևանների հետ։ Կապիտալիզմի դարաշրջանում այդ հարաբերություններն այնքան են սերտացել, կախվածությունն այնքան խորացել, որ մի ժողովրդի կյանքը դարձել է անհնարին առանց հարևանների և նույնիսկ հեռավոր ժողովուրդների կյանքի հետ կապ ունենալու»[3]։

Նույնն էր նաև հայ իրականության մեջ։ Չէ՞ որ կապիտալիզմը կանգ չի առնում ոչ մի խոչընդոտի առաջ։ Ընդհակառակը, «ուժգին հարվածով խորտակելով արգելքները,— գրում է Ս. Կասյանը,— նա մտնում է կույս երկիր, անխնա հարվածում հին կարգերը, տակնուվրա անում «նորմալ» կյանքը, տարածում իր դրական ու բացասական կողմերը, առաջ բերում անվերջ հակադրություններ»[4]։ Այդ էր պատճառը, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Հայաստանի արևելահայ և արևմտահայ հատվածներում նույնպես սկսեց զարգանալ կապիտալիզմը։

Հայ իրականության մեջ կապիտալիզմի զարգացման օրինաչափությունները բացահայտելու նպատակով Կասյանը ամենից առաջ այն հետազոտում էր Ռուսաստանում և Թուրքիայում, որոնց իշխանության տակ էին գտնվում Հայաստանի տարբեր հատվածները։

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումն սկսվեց բավական ուշացումով։ Ս. Կասյանը նկատում է, որ Ռուսաստանի նախակապիտալիստական տնտեսաձևերի վերափոխման գործում վճռական դերը պատկանում է Արևմուտքին։ Ընդօրինակելով վերջինիս, Ռուսաստանն իր հերթին կապիտալիզմը տարածում էր երկրի ծայրամասերում։ Այսպիսով, Ռուսաստանը մի կողմից ենթարկվում էր օտար կապիտալին, մյուս կողմից՝ իր կապիտալին։ Ռուսաստան ներմուծվող կապիտալը սկզբում, որպես կանոն, գործում էր առևտրական կապիտալի ձևով, որը անխնա շահագործում էր երկիրը, քամում բնական հարստությունները, քայքայում գյուղական ազգաբնակչությանը, խորտակում արտադրության հին ձևերը։

Սովորաբար առևտրական կապիտալ ներմուծող երկիրը սպառում է արտահանող երկրի արտադրանքը և նրան տալիս հումք։ Սակայն XIX դ. 70-ական թվականներից սկսած՝ Ռուսաստանը ընդունում է նաև արտասահմանյան կապիտալի արդյունաբերական ձևը։ Օտարերկրյա կապիտալի ազդեցությամբ երկրում կապիտալիզմը աստիճանաբար վերածվում է արդյունաբերականի, որը առևտրական կապիտալի քայքայած գյուղացիությունից առաջ է բերում պրոլետարիատ։ Օտար կապիտալի հետևանքով Ռուսաստանում ավելի արագ աճում էր պրոլետարիատը, քան արդյունաբերական բուրժուազիան։

---

3 Ս. Կասյան, Ընտիր երկեր, էջ 161։

4 «Մեր խոսքը», 26. 1. 1914։

երկրի արտադրողական ուժերի զարգացումը չէր համապատասխանում ժողովրդական հարստության աճին,— նշում է Կասյանը,— «որովհետև աշխատանքի հավելյալ արժեքը՝ տոկոսների, շահի, ռենտայի միջոցով հոսում էր երկրից դուրս»[5]։ Հենց դրանով էլ բացատրվում է ռուսական բուրժուազիայի թուլությունը։

Հայտնի է, որ ցարական ինքնակալությունը բուն Ռուսաստանի և նրա ծայրամասերի նկատմամբ վարում էր ամենևին ոչ միատեսակ քաղաքականություն։ Երկրում տիրապետում էին ռուս ֆեոդալներն ու խոշոր դրամատերերը։ Միապետական իշխանությունը կախման մեջ էր գտնվում այդ երկու խմբերից և փաստորեն դարձել էր նրանց կամակատարը։ Ս. Կասյանը այդ ամենի պատճառը համարում է այն, որ երկրում խախտված էր պետական պարտքի և ազգային եկամտի համամասնությունը՝ պետական պարտքը հասել էր հսկայական չափերի։ Հետագայում երևան է գալիս ռուս առևտրա-արդյունաբերական բուրժուազիան։ Վերջինս գժգոհ էր ցարական կառավարությունից, սակայն ոչ թե հեղափոխականության պատճառով, ինչպես կարծում էին մենշևիկները, այլ երկրի կառավարման գործում իր գրաված ցածր դիրքերի համար։ Դրա հետ միաժամանակ ինքնակալությունը երբեմն դիպչում էր բուրժուազիայի տնտեսական շահերին՝ պրոլետարական շարժման ազդեցության տակ որոշ զիջումներ անելով աշխատանքի բանակի ներկայացուցիչներին։ Նման պայմաններում բուրժուազիայի մեջ ծագում էին կառավարությանը ոչ ձեռնտու օպոզիցիոն տրամադրություններ։ Եվ պատահական չէր, որ կառավարությունը գնում էր բուրժուազիայի նկատմամբ տնտեսական զիջումների՝ նրան հանձնելով երկրի որոշ գավառներ։ Նույն նկատառումով էլ, ըստ Ս. Կասյանի, ռուսական առևտրա-արդյունաբերական կապիտալի ճիրաններին է հանձնվում նաև Անդրկովկասը։

Ռուսական կապիտալիզմի հակասական զարգացումը պայմանավորված էր երկրի վիճակով։ Արևմտյան կապիտալը ձգտում էր ցարիզմը օգտագործել ոչ միայն երկիրը տնտեսապես շահագործելու, այլև քաղաքականապես ղրսպելու համար։ Եվ որքան էլ «օտար կապիտալի տիրապետումը ռուսական շուկայում և վերջինիս «իսկական» տերերի պետական իրավունքների բռնադատումը անհաճո լինեին ռուսական բուրժուազիային,— գրում է Ս. Կասյանը,— որին նույնպես հարկավոր է միապետը, այնուամենայնիվ, նա պետք է տանելի համարեր դրությունը»[6], այլապես հասունացող հեղափոխությունը նրան վտանգ էր սպառնում։

Ի տարբերություն կենտրոնական Ռուսաստանի, նշում է Ս. Կասյանը, ինքնակալության քաղաքական շահերը Անդրկովկասում համընկնում էին ռուսական բուրժուազիայի տնտեսական և սոցիալական շահերին։ Եթե բուն Ռուսաստանում գործարանատերերը երբեմն դժգոհում էին բանվորների ու կապիտալիստների տնտեսական հարաբերություններին պետության միջամտությունից, ապա Անդրկովկասում այդպիսի առիթներ չկային։ Այստեղ արդյունաբերության զարգացման կասեցումը ձեռնտու էր ինչպես ռուսական արդյունաբերական բուրժուազիային, այնպես էլ ինքնակալության քաղաքական

---

5 Ս. Կասյան, Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, Թիֆլիս, 1923, էջ 9։

6 «Կարմիր աստղ», 12. III. 1922։

նկատառումներին։ Բանն այն է, որ Անդրկովկասում արդյունաբերության զարգացումը և քաղաքներում բանվորների կենտրոնացումը կստեղծեր Ռուսաստանի պայքարող պրոլետարիատի դաշնակից։ Մյուս կողմից, ռուսական բուրժուազիան խուսափում էր մրցակցությունից՝ գտնելով, որ Անդրկովկասում արդյունաբերության զարգացման հետևանքով ռուս կապիտալիստը կզրկվի դերօգուտից։ Ցարական կառավարությունը պաշտպանում էր ռուսական բուրժուազիայի նման դիրքորոշումը։

Բուն Ռուսաստանի և Անդրկովկասի փոխհարաբերությունները Ս. Կասյանը որակում է որպես գաղութային շահագործման հիմքերի վրա կառուցված տնտեսական հարաբերություններ։ Նա գրում է. «Ինքնակալությունը Անդրկովկասի շուկան դարձնում է ռուս առևտրա-արդյունագործական կապիտալի բացառիկ սեփականությունը։ Անդրկովկասը, որպես գաղութ, պարտավոր էր ապառել Ռուսաստան-մետրոպոլիայի ֆաբրիկատները։ Անդրկովկասը պարտավոր էր իր հում նյութերը հանձնել Ռուսաստանին։ Ինքնակալությունը ձեռք էր առնում ամեն միջոց, որպեսզի հում նյութը չմշակվեր տեղում, որպեսզի ծայրագավառը չզարգացներ իր մեջ սեփական արդյունագործություն, որպեսզի նա տնտեսապես կախված լիներ Ռուսաստանի գործարանատերերից, ենթարկված սրանց կապիտալիստական շահագործությանը»[7]։ Դրա փոխարեն ինքնակալությունը Անդրկովկաս էր ներմուծում ռուսական արդյունաբերության արտադրանքը։ Տեղական արհեստագործությունն ու տնայնագործությունը, չդիմանալով գործարանային ապրանքների մրցակցությանը, արագորեն շուկայից դուրս էին մղվում։

Սակայն որքան էլ ցարական բուրժուազիան ձգտում էր արգելակել Անդրկովկասի արդյունաբերության զարգացումը, այնուամենայնիվ անհնարին էր կասեցնել օբյեկտիվ տնտեսական օրենքների գործողությունը։ Երկիրը կառավարողների կամքից անկախ, նշում է Ս. Կասյանը, Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում «ինդուստրիական կապիտալը լուռ ու մունջ կատարեց իր հասարակական դերը, հեղաշրջելով ֆեոդալական միապաղաղ ու ճորտային հարաբերությունները և սոցիալական դիֆերենցիացիայի ենթարկելով ամբողջ հասարակությունը»[8]։ Դրա հետևանքով երկրամասի բնակչության կյանքում տեղի ունեցան սոցիալ-տնտեսական աչքի ընկնող փոփոխություններ, որոնք էապես ազդեցին հասարակական կյանքի վրա։ Այդ տեսակետից Ս. Կասյանը ընդգծում է «կապիտալիզմի, այսինքն՝ դրամատիրական խոշոր արդյունաբերության փառավոր մուտքը, որի անխուսափելի հետևանքն էր բանվորական շարժումը»[9]։

Ռուսական արդյունաբերության համար հատկապես կարևոր էին Անդրկովկասի նավթը, պղինձը, մարգանեցը։ Ցարական Ռուսաստանը արտասահմանից ներմուծելով կապիտալ, այն ներդնում էր Անդրկովկասում և առաջին հերթին՝ Բաքվում։ Նավթարդյունաբերությունից ստացվող բարձր եկամուտը առաջ էր բերում այդ գործում նաև տեղական առևտրական կապիտալի օգտագործման անհրաժեշտություն։ Սակայն, «Ապշերոնյան թերակղզում «դեսանտ հանձ՝ած» կապիտալիզմը,— գրում է Ս. Կասյանը,— ակլիմատիզացիա-

7 Ս. Կասյան, Ընտիր երկեր, էջ 305։
8 «Կայծ», 9. IV. 1906։
9 «Վերածնություն» (Ռուշչուկ), 10. II. 1904։

յի ենթարկվելով, այսինքն՝ ներմուծված կապիտալը ծնունդ տալով տեղական կապիտալին, միանալով նրա հետ և առաջ բերելով երկրային կապիտալիզմ, սահմանափակվում էր երկրի նեղ շավիղով»[10], գլխավորապես Բաքվով, մասամբ՝ Թիֆլիսով ու Բաթումիով՝ երկրամասի մնացած մասը թողնելով գաղութային կապիտալիզմի «թաթերի մեջ» կաշկանդված վիճակում։

Կասյանը Բաքուն համարում էր եվրոպա-ամերիկյան կապիտալիզմի անդրկովկասյան նախադուռ, որը մի քանի տասնամյակում աճեց ու դարձավ եվրոպական տիպի խոշոր քաղաք՝ ենթարկվելով կապիտալիզմի բացասական ու դրական կողմերին, նրա «ավերող ու շինարար ազդեցությանը»։ Դրան նպաստեց քաղաքի աշխարհագրական դիրքը և բնական հարստությունը, որոնցով նա դեպի իրեն էր ձգում կապիտալի ներկայացուցիչներին։ Իսկապես «նավթային արդյունագործությունը այն հսկա անիվն է,— գրում էր Ս. Կասյանը,— որ պտտեցնում է Բաքվի սոցիալ-տնտեսական ամբողջ կյանքը։ Արտադրության այդ ճյուղի մեջ է արտահայտվել եվրոպական կապիտալիզմը իր ամբողջ թափով»[11]։

Ճիշտ չէր լինի, սակայն, Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման օրինաչափությունները բնութագրել միայն Բաքվի օրինակով։ Չնայած կապիտալիզմի առաջընթացին Անդրկովկասում, այդուհանդերձ, այստեղ «հին, նախակապիտալիստական հասարակության տնտեսական ու սոցիալական կարգերը քաշկռտվում են նորածագ բուրժուական ձևերի մեջ՝ ինչպես կուլտուրապես ետ մնացած երկրներում... Ապրանքային մանր արդյունաբերությունը տակավին պատկառելի տեղ է բռնում մեր հասարակության մեջ»[12]։ Երկրամասում մեծ թիվ էին կազմում մանրբուրժուական տատանվող տարրերը, շարչիառևտրականները, ունևոր արհեստավորները և մանր սեփականատեր գյուղացիները։ Հակառակ դրան, արդյունաբերական պրոլետարիատի շարքերը այստեղ ստվար չէին։

Կապիտալիստական ուղիով զարգանալու առումով Հայաստանը գտնվում էր ավելի անբարենպաստ պայմաններում, քան Ադրբեջանը և Վրաստանը։ Ս. Կասյանը նկատում է, որ Հայաստանի տնտեսության զարգացումը պայմանավորված է ռուսական կապիտալիզմի փոսթյամբ և այն տեղով, որ նրան հատկացված էր կապիտալիզմի սիստեմում։ Ավելին, եթե Անդրկովկասի առանձին կենտրոններում նկատվում էր արդյունաբերական կապիտալի որոշակի աճ, ապա դա չէր վերաբերում Հայաստանին։ Վերջինս ենթարկված էր «միայն առևտրական կապիտալի քայքայող բրիչին, իսկ արդյունագործական կապիտալի շինող մուրճն ու զնդանը չեն աշխատել այնտեղ»[13]։

Ս. Կասյանը վիճակագրական տվյալներով ապացուցում էր, որ նախասովետական Հայաստանը շարունակում էր մնալ գերազանցապես գյուղատնտեսական երկիր։ Այսպես, նախապատերազմական տվյալների համաձայն, գյուղատնտեսությամբ զբաղվել է Կովկասի հայության 71,3 տոկոսը, արդյունաբերության մեջ՝ 10,5, առևտրի և հաղորդակցության բնագավառում՝ 8,5, իսկ վարձու աշխատանքով՝ 4,1 տոկոսը։ Ցարական Ռուսաստանի մի շարք այլ ծայրագավառներում դրությունը այդ տեսակետից համեմատաբար բարվոք է

10 Ս. Կասյան, Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, էջ 12—13։
11 «Կայծ», 9. IV. 1906։
12 «Ապագա» (Ռուշչուկ), 1. I. 1905։
13 Ս. Կասյան, Հայաստանի տնտեսական-դասակարգային ստրուկտուրան, էջ 13։

եղել։ Լաավիայում, օրինակ, գյուղատնտեսությամբ զբաղվում էր ազգաբնակչության 56,1 տոկոսը, արդյունաբերությամբ՝ 17,9, առևտրով և հաղորդակցությամբ՝ 5,5 տոկոսը[14]։ Ամբողջ Երևանյան նահանգի գործարաններում ու արհեստանոցներում 1915 թ. աշխատել է ընդամենը 4738 մարդ, այն էլ ոչ արդյունաբերական բանվորներ։ Նրանց մեծ մասը աշխատել է նախնական գործիքներով և ապրանքներ արտադրել սոսկ տեղական շուկայի համար։ Միայն «փականագործական-մեխանիկական, չուգունաձուլաբանային և սպիրտ դուրս գրող գործարաններն էին, որ իրենց 10—12 բանվորներով յուրաքանչյուրը՝ մի քիչ նմանում էին «քաղաքային արդյունագործությանը»[15]։

Առևտրական կապիտալի կաշկանդումների պատճառով Հայաստանը զուրկ էր ծանր արդյունաբերությունից։ Սակայն դա չէր նշանակում, թե հայ իրականության մեջ կապիտալիզմը չէր զարգանում։ Ընդհակառակը, Արևելյան Հայաստանի տնտեսության առանձին ճյուղերում նկատվում էր խոշոր կապիտալիստական արտադրության զգալի աճ։ Դա մասնավորապես վերաբերում է պղնձի արդյունահանմանը, գինու և կոնյակի արտադրությանը։ Բայց սահմանափակ խոշոր արդյունաբերությունը չէր կարող որոշիչ լինել Հայաստանում կապիտալիզմի զարգացման համար։

Հայկական կապիտալի առանձնահատկությունը Ս. Կասյանը համարում է այն, որ վերջինս զարգանում էր ոչ թե բուն Հայաստանում, այլ նրա սահմաններից դուրս՝ Բաքվում, Մոսկվայում, Թիֆլիսում, Պոլսում, Ամերիկայում, Եգիպտոսում, Հնդկաստանում և այլուր։ Հայաստանի սահմաններից դուրս կար և՛ հայ բուրժուազիա, և՛ հայ պրոլետարիատ։ Դա անուղղակիորեն անդրադառնում էր Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի վրա։

Ս. Կասյանը հանգամանորեն քննում է նաև անդրկովկասյան գյուղում կապիտալիզմի զարգացման հարցերը։ Անդրկովկասի գյուղատնտեսական կապիտալիզմի առանձնահատկությունը նա համարում է այն, որ ի տարբերություն արդյունաբերականի, ցարական բյուրոկրատիան տեղական խոշոր հողատերերի և ազնվականների նկատմամբ վարում էր հովանավորման քաղաքականություն։ Դրանով Անդրկովկասը տարբերվում էր արևմտյան կապիտալիստական երկրների գաղութներից։ Ինքնակալությունը պաշտպանում էր միայն հողային խոշոր սեփականատերերի շահերը՝ նրանց մեջ տեսնելով գյուղում իր իշխանության հենարանը։ Ինքնակալությունը իր տնտեսական քաղաքականությամբ ընդհանուր առմամբ քայքայում էր Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի գյուղատնտեսությունը. «Ռուսական կապիտալը, գործելով սկզբում առևտրական կապիտալի ձևով, հիմնավորապես քարուքանդ է արել Անդրկովկասի բնատնտեսությունը։ Տեղում կյանքի կոչված առևտրական կապիտալի հետ միասին՝ նա ծծում էր գյուղացիության կենսական հյութը։ Անխնա կերպով ոչնչացնելով հին արտադրական ուժերը, միաժամանակ խանգարելով նոր արտադրական ուժերի զարգացումը, ինքնակալությունը ավելի ու ավելի էր կորզում գյուղացիության վերջին կոպեկները զանազան պարտքերի անվան տակ և երկաթե գավազանով քշում նրան աղքատության, արագ զարգացող պաուպերիզմի անողոք գիրկը»[16]։

---

14 Նույն տեղում, էջ 18։

15 Նույն տեղում, էջ 27։

16 Ս. Կասյան. Ընտիր երկեր, էջ 306։

Ըստ Ս. Կասյանի, առևտրական կապիտալը առհասարակ տնտեսական նոր ձևեր չի ստեղծում, այլ ընդհակառակը, քայքայում ու ոչնչացնում է տընտեսության հին ձևերը։ Հետևաբար, ռուսական առևտրական կապիտալին ևս բնատնտեսությունը չէր շահագրգռում, այլ նրան պետք էր փողային տնտեսություն, որպեսզի իր ապրանքները դրամով վաճառելու հնարավորություն ունենար։ Սակայն գյուղացին փող չուներ։ Կապիտալիստի ապրանքները փողով գնելու համար նա, ստիպված, շնչին գներով ծախում էր իր արտադրած մթերքները։ Դա, իհարկե, դրությունը չէր փրկում։ Նման դեպքում նրան «օգնության» էր հասնում գյուղական վաշխառուն կամ առևտրական կապիտալիստը՝ արագացնելով գյուղատնտեսության քայքայման պրոցեսը։

Առևտրական կապիտալի էությունը Ս. Կասյանը համարում է այն, որ նա շուկայում հանդես է գալիս խոշոր արդյունաբերության արդյունքի ձևով, այն դեպքում, երբ արտադրական պրոցեսը տեղի է ունենում «մանր ու բաժան տնտեսություններում։ Իսկական արտադրողները շուկան իրապես չեն ճանաչում. նրանց հարաբերությունները սրա հետ կատարվում է ոչ թե անմիջապես, այլ դրամատեր-վաճառականների միջոցով և միջնորդությամբ։ Արտաքին աշխարհը ճանաչում է բերքը շուկա հասցնող դրամատեր միջնորդ-վաճառականին, թեև վերջինս արտադրության մեջ, բացի իր դրամական պասսիվ մասնակցությունից, ուրիշ ոչ մի անմիջական և ակտիվ դեր չի կատարել»[17]։ Նույնիսկ բարեգործական կապիտալը, նշում է Ս. Կասյանը, սիրում է շահույթ կորզել։ Հակառակը կարծել՝ կնշանակի ունենալ «բավական դողայով տիրացուական մտածելակերպ»[18]։

Առևտրական կապիտալին տիրապետող միջնորդ-վաճառականը շահագործում է ինքնուրույն մանր արտադրողներին։ Ս. Կասյանը ցույց է տալիս, որ այդ շահագործումն արտահայտվում է երկու ձևով՝ որպես գնող և որպես վաճառող։

Փողի կարիքից դրդված, մանր արտադրողը շտապում է միջնորդ-վաճառականին ծախել իր արտադրանքը։ Կամ էլ իր խղճուկ տնտեսությունը պահպանելու համար մանր արտադրողը պարտքով փող է վերցնում միջնորդ-վաճառականից, պայմանով, որ նախօրոք որոշված գնով իր աշխատանքի արդյունքը ծախի նրան։ Դրանով միջնորդ-վաճառականը հանդես է գալիս նաև որպես վաշխառու։

Հայաստանի գյուղատնտեսության մեջ կապիտալիզմը զարգանում էր դանդաղ և հակասական ընթացքով։ Մինչև XX դ. սկիզբն այստեղ բնատնտեսությունը գիջում էր փողային տնտեսությանը թերևս միայն այգեգործության ու բամբակագործության բնագավառում։ Ըստ որում, այդ պրոցեսը նույնպես թույլ էր։ Գյուղատնտեսության մեջ ապրանքներ արտադրվում էին «տնվորաբար մանր տնտեսություններում,— գրում է Ս. Կասյանը,— շնչին կապիտալներով, տեղական կամ նահանգի շուկաների համար, կա՛մ, վերջապես, ծախելու միջնորդ առևտրականներին»[19]։ Դրա հետևանքով, ինչպես ամբողջ Անդրկովկասի, այնպես էլ Հայաստանի գյուղատնտեսության մեջ մինչև ներկա դարի սկիզբն էլ իշխում էր առևտրական կապիտալը, իսկ արդյունաբերական կապիտալիզմը տակավին պատմություն չուներ։

---

17 «Կայծ», 23. VII. 1906։

18 «Խորհրդային Հայաստան», 21. XI. 1923։

19 «Կայծ», 20. IV. 1906։

Սարսափելով հեղափոխությունից, ցարական կառավարությունը երկիրը վիրածել էր բանտի ու աքսորի։ Միևնույն ժամանակ ինքնակալությունը հասկանում էր, որ միայն բռնությամբ հնարավոր չէ երկիրը պահել «խաղաղ» վիճակում։ Ուստի, իր դիրքերը պահպանելու նպատակով նա վարում էր Ռուսաստանի սերիտորիայում ապրող տարբեր ժողովուրդների ռուսացման քաղաքականություն կամ էլ նրանց մեջ սերմանում ազգային թշնամանք։ Կառավարությունը փակել տվեց «հայոց ծխական դպրոցները, ուր ռամիկ գյուղացիների և աղքատ քաղաքացիների զավակները ստանում էին մայրենի՝ իրենց հեշտ ըմբռնելի լեզվով կրթության սկզբնական սերմերը»[20]։

Ոչ-ռուս ժողովուրդների ռուսականացման քաղաքականությունը ինքնակալության կողմից իրականացվում էր նաև տնտեսապես։ Այսպես, օրինակ, Ռուսաստանից Անդրկովկաս էին բերվում ռուս գյուղացիներ և բնակեցվում արգավանդ հողատարածությունների վրա։ Ս. Կասյանը բերում է Բորչալուի գավառի՝ ռուսներով բնակեցված Պրիվոլնոյե գյուղի օրինակը, որտեղ յուրաքանչյուր ծուխ ուներ 7,7 հոգի՝ 32 դեսյատին բաժնեհողով և 7 դեսյատին կապալահողով։ Մինչդեռ նույն գավառի Բարմաղսրգ ադրբեջանական գյուղում նույնքան շնչից բաղկացած ամեն մի ծուխ ուներ 20 դեսյատին բաժնեհող և 5 դեսյատին կապալահող[21]։

Ցարական կառավարությունը խլեց նաև եկեղեցական ունեցվածքը՝ հայտարարելով, որ Հայաստանի վանքերի կալվածքները ռացիոնալ չեն օգտագործվում։ Իհարկե, դա այդպես էր, նկատում է Կասյանը։ Սակայն դա ինքնակալությանն իրավունք չի տալիս հափշտակելու եկեղեցու հողերը, մանավանդ որ հայ ժողովուրդը դրանից ոչինչ չի շահում։ Ավելին, էջմիածնին պատկանող գյուղերում պտղով տասանորդի փոխարեն կառավարությունը մտցրեց դրամական հարկ, որի հետևանքով ավելի էր քայքայվում գյուղացու խարխուլ տնտեսությունը։

Մասնավոր սեփականությունը բուրժուական հասարակության հիմնական ելակետն է։ Չկա բուրժուական այնպիսի պետություն, որի օրենսդրքում թույլատրվի մասնավոր սեփականության հափշտակում։ Ընդհակառակը, նշում է Կասյանը, կապիտալիզմի օրոք մասնավոր սեփականությունը համարվում է կուռք, «մի անձեռնմխելի սրբություն, որին երկրպագում են բուրժուական տերությունները, աստվածային մի օրենք, որին ամենախիստ զգուշությամբ և ամենահավատարիմ կերպով շոյում և պահպանում են իշխանությունները»[22]։ Այդպիսին է նաև ցարական Ռուսաստանի օրենսդրությունը։ Այդուհանդերձ, ձեռք մեկնելով ուրիշի ունեցվածքին, ինքնակալությունը խախտեց իր իսկ պաշտած օրենքը։ Այդ օրենքն անհողդողդ է միայն այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է ընչազուրկ բանվորին ու գյուղացուն։ Եթե, օրինակ, որևէ «քաղցած բանվոր ակցիոներական մի ընկերության գործարանից թռցնե մի գործիք, եթե ցրտից կուչ եկած մի գյուղացի մի մեծ կալվածատերի անտառից մի կտոր փայտ կտրե իր մարմինը տաքացնելու համար, ամբողջ բուրժուա հասարակությունը իսկույն կգոռա՝ ավազակություն, ոստիկանությունը՝ ոճրագործություն։ Իսկ օրենսգիրքը կազդարարե՝ կախաղա՛ն...»[23]։

20 «Վերածնություն», 2. VIII. 1903։

21 Ս. Կասյան, Ընտիր երկեր, էջ 312—313։

22 «Վերածնություն», 9. VIII. 1903։

23 Նույն տեղում։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների գաղափարախոսները իրենց հերթին օտարացնում էին տարբեր ազգերի աշխատավորներին՝ քարոզելով «ազգի միասնություն» ընդդեմ երկրամասի մյուս ժողովուրդների։ Իսկ դա ձեռնտու էր հայ բուրժուազիային։ Վերջինս, նշում է Ս. Կասյանը, «որպեսզի յուր գործարանում աշխատող հայ բանվորի աշխատանքի ուժը «արյունակցությամբ» շահագործե և նրա դասակարգային վնասակար գիտակցությունը խավարի մեջ պահե՝ ազգային միություն է երգում։ Որպեսզի երկրի շուկան յուր դասակարգի այլազգ քոլեգների մրցումից ապահովե և ամբողջապես յուր տրամադրության տակ դնե՝ ազգային շաան է քարոզում»[24]։

Հայ իրականության մեջ սպեցիֆիկները փորձում էին ապացուցել, թե կապիտալիզմի ժամանակ պրոլետարիատի դասակարգային պայքարը տարբեր ազգերի մոտ ունի տարբեր բնույթ և այդ տեսակետից հայերը, իբր, առանձնահատուկ են։ Փաստորեն դրանով նրանք փորձում էին Հայաստանի բանվորներին անջատել միջազգային պրոլետարիատի պայքարից։ Մինչդեռ կապիտալիստական շահագործումը ամենուրեք ենթարկվում է նույն օրենքներին. «կապիտալը,— նշում է Ս. Կասյանը,— բաղկացած է նույն c-ից, v-ից և m-ից... Հավելյալ արժեքի նորմայի շուրջը եղող կռիվը կարո՞ղ է տարբեր լինել հայ, թուրք և ռուս պրոլետարիատի մեջ Բաքվում։ Բացարձակապես ո՛չ։ Իտալիայի, Ավստրիայի, Միացյալ պետությունների կամ հայ, թուրք, վրացի, ռուս պրոլետարիատի դասակարգային կռվի սոցիալական նպատակը կարո՞ղ է տարբեր լինել իրարից։ Բացարձակապես ո՛չ»[25]։ Կապիտալիզմի դեմ պրոլետարիատի դասակարգային պայքարը ունի միջազգային բնույթ։ Դեռևս դարասկզբին Ս. Կասյանը կանխատեսում էր, որ Անդրկովկասի բոլոր ազգերի բանվորներն ու գյուղացիները համատեղ կպայքարեն կապիտալիզմի ու հակահեղափոխության դեմ և ժողովուրդների միջև կհաստատեն լիակատար խաղաղություն ու եղբայրություն։

САРКИС КАСЬЯН О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ РАЗВИТИЯ КАПИТАЛИЗМА В ЗАКАВКАЗЬЕ

М. А. ГРИГОРЯН

Резюме

Царское самодержавие всеми мерами тормозило развитие производительных сил Закавказья. Это обстоятельство С. Касьян объясняет тем, что развитие промышленности на периферии не соответствовало интересам и правительства и русской буржуазии: развитие промышленности в Закавказье создало бы союзника русскому революционному пролетариату. С другой стороны, русская буржуазия не хотела лишиться сверхприбылей, получаемых путем вывоза своих товаров в Закавказье.

Однако многочисленными фактами С. Касьян доказывает, что правящие круги царской России не смогли остановить действие объективных законов. Богатые природные ресурсы Закавказья принудили правительство основать здесь промышленные и горнорудные предприятия, благодаря чему в крае произошли значительные социально-экономические сдвиги.

24 Նույն տեղում, 9. III. 1904։

25 Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, էջ 32—33։